ԱՐՑԱԽԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԽԱՂ
ՓԲԸ

NATIONAL ARTSAKH LOTTERY
CJSC

ՇԱՀՈՒՄ ԵՍ ԴՈՒ, ՇԱՀՈՒՄ Է ԵՐԿԻՐԸ

№ 0153 եզ                                                                 16. 11. 17 թ.

ՀՀ Շիրակի մարզպետ

պրն. Ա. Խաչատրյան

Հարգելի պրն. Խաչատրյան,

Արցախի ազգային վիճակախաղ ՓԲԸ-ի անունից հայտնում եմ իմ շնորհակալական ու երախտիքի խոսքերը Արցախի ազգային վիճակախաղի կայացման գործում Ձեր ցուցաբերած աջակցության և համագործակցության համար:

Մեծ է Ձեր ներդրումը Շիրակի մարզում Արցախի ազգային վիճակախաղի նպատակի և առաքելության մասին համապատասխան քարոզչության և գաղափարի տարածման գործում:

Արցախի ազգային վիճակախաղ ՓԲԸ հիմնադիրը Արցախի Հանրապետության կառավարությունն է: Արցախի զարգացման, կայուն վարձատրվող աշխատատեղերի ապահովման, տնտեսության զարգացման, ռազմավարական նշանակություն ունեցող վերաբնակեցման ուղղությամբ կարևոր և նշանակալի դեր ունի Արցախի ազգային վիճակախաղը և նրա շարունակականությունը: Վիճակախաղը հնարավորություն է տվել Արցախում ստեղծել մոտ 200 աշխատատեղ և խթանել վերաբնակեցման ծրագրին՝ Քաշաթաղի շրջանի Իշխանաձոր համայնքում կառուցելով առանձնատներ վերաբնակիչների համար:

Վստահ եմ, որ սկիզբ առած մեր համագործակցությունը կրելու է շարունակական բնույթ՝ հանուն Արցախի շենացման:

Հարգանքով՝

Արցախի ազգային վիճակախաղի
Երևանի գրասենյակի տնօրեն
Ազատուհի Սիմոնյան

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 12367-17
22. 11 2017 թ.

Երևան, Տպագրիչների 8/39    Հեռ. +374 11 248008
Tpagrichner st. 8/39, Yerevan    Tel. +374 11 248008
nkr.vichakakhagh@gmail.com    nkrlottery.am



զարկ տալու և ԼՂՀ համայնքների զարգացման նպատակով սկսված 37 առանձնատների կառուցման համար մինչ օրս ծախսվել է 180 մլն ՀՀ դրամ:

2016թ. հունվարի 28-ից՝ Հայոց բանակի օրվա առթիվ, շրջանառության մեջ է դրվել Արցախի ազգային վիճակախաղի 4-րդ թողարկումը՝ թվով 150.000 հատ վիճակախաղի տոմս: 2016թ. վիճակախաղը նվիրված է հայ զինվորին, ուստի վիճակախաղի շահույթի մի մասը ուղղվելու է ԼՂՀ Պաշտպանական Բանակի զինծառայողների սոցիալական ուղղվածության ծրագրերի իրագործմանը: Այս տարվա խաղարկության շահումային ֆոնդի մեջ ներառված են դրամական շահումներ, Արցախյան ձեռագործ գորգեր, Արցախի ավանդական թթի օղի՝ տակառիկներով, Արցախ մեր հուշանվեր:

Մենք համոզված ենք, որ համահայկական միասնական ջանքերով ու նվիրումով կկարողանանք պահել, պահպանել ու զարգացնել Արցախը՝ բարեկեցիկ կյանք ապահովելով աչցախցու համար:

**Պետության կողմից նախաձեռնված վիճակախաղ, նպաատկար ազգային, վերաբնակեցում, մշակութային արժեքներ, տեղական արտադրանք, հիմքում Արցախի զարգացումն է, տոմսի արժեքը 2000 դրամ: Մասնակցենք Արցախի շենացմանը:**

## ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԽԱՂ՝ ՆՊԱՏԱԿԸ ԱԶԳԱՅԻՆ

WWW.NKRLOTTERY.AM

nkr.vichakakhagh@gmail.com
+374 11248008
+374 47966002
+374 4796003
Երևան, Տպագրիչների 8/39
Ստեփանակերտ, Հ.Հակոբյան 30

# ԱՐՑԱԽԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԽԱՂ

# ARTSAKH NATIONAL LOTTERY

Արցախի ազգային վիճակախաղ ՓԲԸ-ն հիմնադրվել է 2014թ. Լեռնային Ղարաբաղի հանրապետության կառավարության կողմից:

- Նպաստել հայրենադարձությանն ու վերաբնակեցմանը,
- Աջակցել կանանց մշտական աշխատատեղերի ապահովմանը,
- Աջակցել ԼՂՀ Պաշտպանական Բանակի զինծառայողների սոցիալական ուղղվածության ծրագրերի իրագործմանը,
- Նպաստել ‹‹Արտադրված է Արցախում›› Made in Artsakh տարբերանշանը կրող արտադրատեսակների զարգացմանը և տարածմանը:



Արցախի ազգային վիճակախաղը ձեռք է բերել համահայկական տարածում և նշանակություն, որն ունի իր ներկայացուցիչները երեք տասնյակից ավելի երկրներում: Ունենալով 2 տարվա վստահելի գործընկերոջ համբավ ոչ միայն Հայաստանում և Արցախում, այլև ողջ հայության շրջանում՝ հաջողությամբ իրականացրել է իր առջև դրված ծրագրերը և լայն թափով դարձել է արցախյան արտադրողի հիմնական աջակիցներից մեկը, որը կրում է շարունակական բնույթ:

Արցախի ազգային վիճակախաղի խաղարկությունը տեղի է ունենում ամեն տարի դեկտեմբերի 28-ին՝ Արցախի Գերագույն խորհրդի առաջին ընտրության օրը:



Մինչ օրս տեղի է ունեցել թվով 4 խաղարկություն, որին մասնակցել են շուրջ 500.000 հայորդիներ՝ աշխարհի 30 պետություններից: 4 խաղարկությունների արդյունքում շահել են թվով 1601 հայրենակիցներ, իսկ շահումային ֆոնդը ընդհանուր առմամբ կազմել է 485.030.000 ՀՀ դրամ / 1.010.480 Դոլար/:



Վիճակախաղի վաճառված տոմսերի հարաբերակցությամբ ձևավորովում է շահումային ֆոնդ, որը կազմված է լինում բացառապես «Արտադրված է Արցախում» տարբերանշանը կրող արտադրատեսակներից: Շահումային ֆոնդի գերակշիռ և հիմնական մասը կազմված է Ղարաբաղ Կարպետ գորգագործարանի արտադրանքը հանդիսացող ձեռագործ ավանդական գորգորից: Արցախի ազգային վիճակախաղը Ղարաբաղ Կարպետ գորգագործարանի հիմնական պատվիրատուն է, որտեղ աշխատում են 200 արցախցի կանայք:

3 տարվա ընթացքում Արցախի ազգային վիճակախաղի շահումային ֆոնդի ձևավորման միջոցով Արցախում շուրջ 250 հոգի ապահովվել են կայուն վարձատրվող աշխատատեղով:



Ծրագրի շրջանակում ընկերության կողմից Քաշաթաղի շրջանի Իշխանաձոր համայնքում իրականցվում է 37 բնակելի առանձնատների շինարարություն, որոնցից 10 առանձնատուն արդեն գտել են իրենց բնակիչներին: Շինարարությունը կատարվում է համայնքի բնակիչների կողմից, որի շնորհիվ այսօր համայնքում բացվել են որոշակի աշխատատեղեր:

Իսկ Քաշաթաղի շրջանի ազատագրված Իշխանաձոր գյուղում՝ հայրենադարձությանը

